ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » օգոստոսի 2021 թվականի N 18-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-066-0004-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Մելսիկ Սահակյանի դիմումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ-ի թիվ 1 որոշումը <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ –ի կողմից տրված հողամասի, պարսպի և կիսաքանդ բնակելի տան հատակագծի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-066-0004-0002 ծածկագրի տակ գտնվող 0.14774 հա տնամերձ հողամասի այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1950թ-ին կառուցված 29.80 քմ կիսաքանդ բնակելի տան 16.40 քմ բաց պատշգամբի 3.60 քմ պարսպի նկատմամբ Հրանտ Ռազմիկի Սարգսյանի ծնված/ ծնված՝ 1958թ /, սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինության նորմերին , չի առաջացնում սերվիտուտ ,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները :
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ձորագյուղ համայնք 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 6 բնակելի տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

/Համայնքի ղեկավար՝ Ա. Ռամազյան

30 օգոստոսի 2021թ
գ. Ձորագյուղ